զՄկ՞րտչ Ն՞հպետենց, զՄկրտիչ Օրբէլենց, զՄկրտ՞չ Հողձեցի, զՂ՞զր Մահդասենց, զԹովմա, զՂ՞զր Աղթ՞մրցի և զՄելքիսէդեկ Բերկրցի և զՍարգիս աղաչեմ յիշել ի տ՞ր սրտի մտաւք։ Նա և զ՞Յկր դպիր, և զՅովաննէս կրօնաւոր, որ բ՞զմ աշխատ՞ւբ և չ՞չրնաւք օ՞գնկն եղեն ինձ ի գրելս. տացէ Ն՞ց ք՞ս ա՞ծ վարձս ողորմ՞ն, և պ՞հեսցէ ի կ՞մս իւր. ամէն եղիցի.

353ա Փ՞ս ա՞ծ բարեխօսուն՞ բ սրբոց առք՞լոց, որ այսօր ակն ունին առ քեզ, զի գձ՞լ դաս, մի՞թրցես զն՞ս։ Միխիթարեալ ք՞ս ա՞ծ զՆաքարբէկ մահդասու հ՞զին ի դասս ս՞ր առ՞քլոցդ, որ այսօր մնզ լօ (sic) ծիրան և խնձոր երեր, և զիս զանպիտ՞ն զՅ՞կր դպիրսէ։

Դ.

Երուս. Ս. Յակ. մատ. № 149.

Այլ և ես վերջինս և մեղապարտս ի ծնունդս եկեղեցւոյ, տրուպս ի բանասիրաց և անարժանս ի կարգաւորաց, սոսկ անուն վարդապետս Թովմայ, յերեսս անկեալ արտասուալիր դիմօք, հոգս և մոխիրս սուրբ դարչապարաց ձերոց, աղերսեմ ի խորոց սրտէ, մանաւանդ ա՞ծարան վարդապետաց ուղղափառութեան և գրոց աշակերտեալ անձանցդ մաքրութեան և քրիստոսաձիր մանկանցդ Նորոյս սիօնի քահանայիցդ լրման, որք հանդիպիք Նորընծայ ա՞ծաքարոզ սուրբ աւետարանիս Ղուկասու մեկնութեան, ընթերցմամբ, դասիւ կամ օրինակելով և կամ սակս մասին սմին պատահէք տեսութեամբ, յիշեսջիք և զիմս աշխատութիւն, որ ի վերջին ժամանակի զգիրս զայս գտի եւ ետու ի ձեռս վարժապետաց և բարուն՞ապետացդ հայկազեանս սեռի, դաս ասել սովաւ և զաշակերտեալսն ի հոգի և ի մարմին միխիթարել։ Եւ թողութիւն հայցել ի տեառնէ բազմադիմի և բազմատեսակ յանցանաց մերոց։ Մանաւանդ հոգևոր և մարմնաւոր ծնողաց մերոց, կենդանեաց և հանգուցելոց. Մաթէոս կրօնաւորին և ծնողաց նորին եւ հոգևոր և մարմնաւոր հարազատաց մերոց և ամենայն երախտաւորաց և արեան մերձաւորաց։ Եւ առաւել յիշատակ եղիցի սա վարժապետայն մերոց և հոգևոր հարցն և ուսուցչացն՝ Գրիգորի մեծի հռետորին և Սարգսի վարդապետին և Վարդանայ վարդապետին և Յովհաննէս վարդապետին, և ամենայն վարդապետաց ուղղափառաց, որ և ձեզ յիշողաց և մեզ յուսողացս առհասարակ ողորմեսցի բարերար և բազումողորմ մարդասէրն Աստուած և տէր մեր Յիսուս Քրիստոս, ամէն։

---

† 353ա. Գրչի յիշատակարանն է։